Դասընթացներ Փաստաբանների պալատում

22.02.2011 09:10

«Աշխատանքային օրենսդրության պահանջների գործավարական փաստաթղթավորումը»

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

մարտ-ապրիլ ամիսներ, 2011թ.

ՀՀ փաստաբանների պալատի դահլիճ

(ք.Երևան, Զաքիյան 3)

2011 թվականի մարտ ամսից սկսած ՀՀ փաստաբանների պալատը կազմակերպում է աշխատանքային օրենսդրության որոշ հարցերին նվիրված գործնական դասընթաց այն փաստաբանների համար, ովքեր հետաքրքրված են աշխատանքային իրավունքով և ցանկություն ունեն խորացնելու իրենց գիտելիքները՝ ձեռք բերելով պրակտիկ հմտություններ: Դասընթացը բաղկացած է լինելու չորս հանդիպումների շարքից. յուրաքանչյուր հանդիպում նվիրված է լինելու նախապես ընտրված համապատասխան թեմայի քննարկմանը:

Առաջին հանդիպման ընթացքում քննարկվելու են **աշխատանքային իրավահարաբերությունների ծագման և դադարման** հարցերին նվիրված թեման:

Դասընթացը կանցկացնի փորձառու փաստաբան Հերիքնազ Տիգրանյանը:

Դասընթացը նախատեսվում է անցկացնել կենտ հինգշաբթի օրերին (մարտի 3-ին, 17-ին, 31-ին և ապրիլ 7-ին), ժամը 18:00-ից մինչև 20:00-ը, ՀՀ փաստաբանների պալատի դահլիճում: Առաջին դասընթացը տեղի կունենա 2011թ. մարտի 3-ին:

Լրացուցիչ տեղեկությունների և առաջին դասընթացին գրանցվելու համար խնդրում ենք զանգահարել ՀՀ փաստաբանների պալատ հետևյալ հեռախոսահամարներով՝ 54-71-28, 56-57-92 (ներքին՝ 105) և **առաջին հանդիպման համար գրանցվել մինչև 2011թ. փետրվարի 28-ը ներառյալ:**

Յուրաքանչյուր հաջորդ հանդիպման թեմայի, անցկացման օրվա/ժամանակի և գրանցման վերջնաժամկետի մասին Ձեզ կտեղեկացվի լրացուցիչ կարգով:

Տեղերը սահմանափակ են (25 փաստաբան), դասընթացներին կհրավիրվեն ըստ գրանցման առաջնահերթության:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })